

ՀԱՅԿ ԿԵՍՈՅԱՆ

Հայաստանի Հանրապետության Նախագահի աշխատակազմի իրավաբանական վարչության առաջատար մասնագետ,
ՀՀ պետական կառավարման ակադեմիայի իրավագիտության ամբիոնի ասալիրանտ



**ԱՆԿԱԽ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ
ՍԱՐՄԻՆՆԵՐԻ ԻՆՍԻՏՈՒՅԻՆԱԼ ՏԵՂԻ
ԵՎ ԳՈՐԾԱՌՈՒԹԱՅԻՆ ԴԵՐԻ
ՀԻՄՆԱԽՆԴԻՐԸ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԲԱԺԱՆՄԱՆ ԵՎ ՀԱՎԱՍԱՐԱԿԾՈՒՄԱՆ
ՀԱՍՏԿԱՐԳՈՒՄ**

Հոդվածի շրջանակներում ուսումնասիրության առարկա է հանդիսացել պետական իշխանության մարմինների համակարգում գործող անկախ սահմանադրական մարմինների կարգավիճակը բնութագրող հիմնական հատկանիշները, ինչպես նաև զարգությունը և հավասարակշռության այն մեխանիզմները, որոնց միջոցով անկախ սահմանադրական մարմինները փոխկապակցված է պետական իշխանության մարմինների հետ։ Կատարված ուսումնասիրության արդյունքում նշվում է, որ սահմանադրական զարգացումների արդյունքում ՀՀ-ում պետական իշխանության օրենսդիրը, գործադիր և դատական իշխանության ճյուղերի կողմից ստեղծվել են ԱՍՍ-ները, որոնք պետական իշխանության ճյուղերից ունեն ինստիտուցիոնալ և գործառության անկախություն, պարագագարական մարմիններ են, ձևավորվում են Ազգային ժողովի առջև։ Միաժամանակ վեր են հանվել և ներկայացվել են այն հիմնական խնդիրները, որոնք խոչընդորություն են անկախ սահմանադրական մարմիններին արդյունավետ կերպով իրականացնել Սահմանադրությամբ և օրենքներվ իրենց վերապահված գործառույթները։

Հիմնարարեր՝ իշխանությունների բաժանման և հավասարակշռության սկզբունքը, անկախ սահմանադրական մարմիններ, դատախազություն, գործառությային անկախություն, ինստիտուցիոնալ անկախություն, հաշվետվողականություն։

Հայաստանի Հանրապետության 2015թ. լուս.

Սահմանադրության համատերառում առանցքային է համարվում անկախ սահմանադրական մարմինների (այսուհետև՝ ԱՍՍ) ինստիտուցիոնալ տեղի և գործառությային դերի վերլուծությունը Վերջին տասնամյակների սահմանադրական զարգացումների արդյունքում ակնհայտ է դարձել, որ պետական իշխանության գործառույթները իրականացնող մարմինները այլևս չեն տեղափորվում պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի ինստիտուցիոնալ համակարգում, որի արդյունքում պետական իշխանության մարմինները համակարգում ի հայտ են եկել անկախ գործառույթներ իրականացնող մարմիններ՝ ԱՍՍ-ներ։ ԱՍՍ-ները պետական իշխանության ճյուղերից ունեն ինստիտուցիոնալ և գործառությային անկախությունը ենթադրում են, որ այդ մարմինները չեն մտնում պետական իշխանության որևէ ճյուղի համակարգում, իսկ գործառությային անկախությունը ենթադրում են, որ իրենց գործառույթները իրականացնելիս պետա-

կան իշխանության մարմիններից անկախ են և առաջնորդվում են Սահմանադրությամբ և օրենքներով։

Այս առումով անհրաժեշտ է նշել, որ Զ. Լոկի, Շ. Մոնտեսքիոյի, Թ. Զեֆերատոնի կողմից զարգարած իշխանությունների բաժանման տեսությունը ներկայիս սահմանադրական զարգացումների համատեքստում ենթարկվում է վերափոխման, ինչը պայմանավորված է նաև այն հանգամանքով, որ պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի կողմից առաջացել են անկախ մասնագիտացած մարմիններ։ Մինչդեռ իշխանությունների բաժանման և հավասարակշռության դասական տեսության հիմքում ընկած էր այն զաղափարը, որ պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի միջև և այդ համակարգից դուրս գործող այլ մարմիններ չեն կարող գոյություն ունենալ։

Այս առումով անհրաժեշտ ենք համարում նշել, որ Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (այսուհետև՝ ՍԴ) քննարկման

առարկա է հանդիսացել պետական իշխանության ճյուղերի համակարգից դուրս այլ մարմինների ստեղծման հարցը: ՍԴ-ը 2007թ. հունվարի 16-ի ՍԴ-Ո 673-րդ որոշմամբ նշել է, որ երեսն անհրաժեշտ է ստեղծել անկախ ինքնակարագավորվող մարմիններ, որոնք ընդգրկված չեն պետական իշխանության որևէ ճյուղի համակարգում: ՍԴ-ը գտնում է, որ իշխանությունների բաժանման սկզբունքը չի բացառում տնտեսական գործունեության ազատության և ազատ տնտեսական մրցակցության պայմաններում կառավարման այնպիսի գործառույթի առկայությունը, ինչպիսին անկախ կարգավորումն է: Միաժամանակ ՍԴ-ը նշում է, որ այն որպես պետական կառավարման գործառույթ՝ 2005թ. խմբ. Սահմանադրության 5-րդ հոդվածի համաձայն՝ ենթակա է հավասարակշռման իշխանության օրենսդիր, գործադիր և դատական մարմինների գործառնական, հակակշռող և զարգող լիազորությունների շրջանակներում¹: ՍԴ-ի վերը նշված որոշումից բխում է, որ անկախ ինքնակարգավորվող մարմինների՝ գոյությունը դիտարկվում է իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքի համատեքստում, եթե այդ մարմինները իշխանության ճյուղերի կողմից գործառնական, հակակշռող և զարգող լիազորությունների միջոցով հավասարակշռվում են:

ՀՀ-ում սահմանադրական զարգացումների արդյունքում պետական իշխանության մարմինների համակարգում նույնական ստեղծվեցին անկախ մասնագիտական գործառույթներ՝ իրականացնող մարմիններ: 1995թ. Սահմանադրությամբ պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի համակարգից դուրս գործող այլ մարմիններ չեն նախատեսվել: 2005թ. խմբ. Սահմանադրությամբ նախատեսվեցին որոշ պետական մարմիններ՝ Մարդու իրավունքների պաշտպան, Վերահսկիչ պալատ, Հեռուստատեսության ոլորտը կարգավորող հանձնաժողով, որոնք չնայած այն հանգամանքին, որ համարվում էին անկախ, այնուամենայնիվ կառուցակարգային առումով գտնվում էին օրենսդիր իշխանությանը վերաբերող սահմանադրական գլխում, ինչը անտրամաբանական էր և իմնավորված չէ:

Պետական իշխանության մարմինների համակարգում ԱՍՍ-ների ինստիտուցիոնալ տեղի հետ կապված անդրշուրթյունը որոշ չափով հստակեցվեց 2015թ. խմբ. Սահմանադրությամբ, որով պետական իշխանության ճյուղերի համակարգերից դուրս նախատեսվեցին անկախ մասնագիտական գործառույթներ իրականացնող մարմիններ՝ ԱՍՍ-ներ: ԱՍՍ-ներին բնութագրող հիմնական հատկա-

նիշները բացահայտելու նպատակով անհրաժեշտ է համակողմանի վերլուծության արդյունքում քննարկել պետական իշխանության մարմինների համակարգում դրանց ստեղծման անհրաժեշտության հիմնավորվածության, գործառույթների շրջանակի, գործունեության երաշխիքների հետ կապված հարցերը: 2015թ. խմբ. Սահմանադրությամբ նախատեսվել են հետևյալ անկախ սահմանադրական մարմինները՝

- «Մարդու իրավունքների պաշտպան» (այսուհետև՝ ՄԻՊ). անկախ պաշտոնատար անձ է, իրականացնում է պետական և ՏԻՄ-երի ու պաշտոնատար անձանց, իսկ օրենքով սահմանված դեպքերում՝ նաև կազմակերպությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը, նպատում է խախտված իրավունքների և ազատությունների վերականգնմանը, իրավունքներին ու ազատություններին առնչվող նորմատիվ իրավական ակտերի կատարելագործմանը:

- «Կենտրոնական ընտրական հանձնաժողով» (այսուհետև՝ ԿԸՀ). անկախ պետական մարմին է, կազմակերպում է Ազգային ժողովի և ՏԻՄ-երի ընտրությունները, հանրաքվեները, ինչպես նաև վերահսկողություն է իրականացնում դրանց օրինականության և արդյունավետության նկատմամբ:

- «Հաշվերնմիջ պալատ» (այսուհետև՝ ՀՊ). անկախ պետական մարմին է, հաշվերնմություն է իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ:

- «Կենտրոնական բանկ» (այսուհետև՝ ԿԲ). օրենքով իրեն վերապահված գործառույթները իրականացնելիս անկախ է, իմնական նպատակներն են գների և ֆինանսական կայունության ապահովումը, կենտրոնական բանկը մշակում, հաստատում և իրականացնում է դրամավարկային քաղաքականության ծրագրերը:

- «Հեռուստատեսության և Ռադիոյի հանձնաժողով» (այսուհետև՝ ՀՌՀ). անկախ պետական մարմին է, ապահովում է հեռարձակվող լրատվության միջոցների ազատությունը, անկախությունը և բազմազանությունը, վերահսկում է հեռուստաընկերությունների և ռադիոընկերությունների գործունեությունը (Սահմ. 191-200-րդ հոդվածներ):

Կատարված սահմանադրական փոփոխությունների համատեքստում քննարկման առարկա է հանդիսանում պետական իշխանության մարմինների համակարգում ԱՍՍ-ների ստեղծման անհրաժեշտության հիմնավորվածության հարցը, մաս-

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

նավորապես՝ արդյոք⁹ հնարավոր չէ ԱՍՍ-ների գործառույթների իրականացումը վերապահել գործադիր իշխանության մարմիններին: Այս առումով կարծում ենք, որ գործադիր իշխանության մարմինների կողմից որոշ գործառույթները չեն կարող արդար և արդյունավետ կերպով իրականացվել, քանի որ առկա են մի շարք գործոններ, որոնք ուղղակիորեն կամ անուղղակիորեն ազդում են այդ գործառույթների իրականացման վրա: Հետևաբար՝ պետական իշխանության որոշ գործառույթների իրականացումը անհրաժեշտ է վերապահել այնպիսի մարմինների, որոնք պետական իշխանության մարմիններից, այդ թվում գործադիր իշխանության մարմիններից կունենան ինստիտուցիոնալ և գործառության անկախություն և հնարավոր ազեցություններից զերծ մնալու երաշխիքներ:

ՀՀ-ում կատարված սահմանադրական փոփոխությունների արդյունքում՝ պետական իշխանության մարմինների համակարգում ԱՍՍ-ների ստեղծման անհրաժեշտությունը առարկայական դարձելու նպատակով դիտարկենք ընտրությունների կազմակերպման գործառույթի իրականացումը: Լայն առումով ընտրությունների կազմակերպումը գործադիր իշխանության գործառույթն է, սակայն գործադիր իշխանության մարմինների կողմից ընտրությունների կազմակերպման գործառույթի իրականացումը իրական փոտան է ներկայացնում, խնդիրը կայանում է նրանում, որ գործադիր իշխանության մարմինները ունեն լայն հնարավորություն իրենց տիրապետության տակ գտնվող վարչական և ֆինանսական լծակները ընտրությունների կազմակերպման գործընթացում օգտագործման համար: Ընդ որում, այդ լծակները առավել հավանական են, որ կօգտագործվեն իշխող քաղաքական ուժի քաղաքական նպատակների իրականացման համար: Հաշվի առնելով վերոնշյալ խնդիրները՝ ակնհայտ է դառնում, որ ընտրությունների կազմակերպման և այդ գործընթացի նկատմամբ վերահսկողական գործառույթի իրականացումը անհրաժեշտ է վերապահել այնպիսի մարմինի, որը պետական իշխանության մարմիններից, այդ թվում գործադիր իշխանության մարմիններից կունենա անկախություն: Վերը նշված խնդիրի լուծման նպատակով 2015թ. խմբ. Սահմանադրությամբ սահմանադրական կարգավիճակ է ստացել ԿԸՀ-ը, որը անկախ պետական մարմին է, չի մտնում իշխանության որևէ ճյուղի համակարգում և Սահմանադրությամբ ու օրենքներով իրեն վերապահված գործառույթները իրականացնելիս անկախ է: Կարծում ենք, որ պետական իշխանության մարմինների համակարգում ԿԸՀ-ի անկախ սահ-

մանադրական մարմնի կարգավիճակի տրամադրումը բավականին հիմնավորված է, ինչը կարող է լուրջ խթան հանդիսանալ արդար և բափանցիկ ընտրությունների կազմակերպման համար:

Պետական իշխանության մարմինների համակարգում ԱՍՍ-ների ստեղծման անհրաժեշտությունը ընդգծելու նպատակով նշենք ևս մեկ օրինակ՝ գաղտնիք չէ, որ պետական և ՏԻՄ-երը տիրապետում են ֆինանսական ռեսուրսների և տնօրինում են պետական ու համայնքային սեփականությունը: Ակնհայտ է, որ նշված ոլորտներում, եթե նախատեսված չլինեն վերահսկողական գործուն մեխանիզմներ, ապա կմեծանա պետական և ՏԻՄ-երի կողմից չարաշահումներ կատարելու վտանգը: Հետևաբար՝ նշված ոլորտներում անհրաժեշտ է իրականացնել վերահսկողություն, սակայն այդ պարագայում հարց է առաջանում, արդյո՞ք գործադիր իշխանության համակարգում գործող մարմինները կարող են արդյունավետ վերահսկողություն իրականացնել: Կարծում ենք, որ նշված մարմինների կողմից վերահսկողության իրականացման դեպքում՝ գործադիր իշխանության մարմինների կողմից կարող են դրսերվել ազդեցության մի շարք լծակներ, որոնք կխոչընդոտեն վերահսկողության արդյունավետությանը: Հետևաբար՝ վերը նշված ոլորտներում առավել արդյունավետ վերահսկողություն իրականացնելու նպատակով անհրաժեշտ է վերահսկողական գործառույթի իրականացումը վերապահել անկախ մասնագիտացած մարմնի: Այս խնդիրի լուծման նպատակով ՀՀ 2015թ. Սահմանադրությամբ պետական և ՏԻՄ-երի ֆինանսական և սեփականության տնօրինման ոլորտներում վերահսկողություն իրականացնելու նպատակով ստեղծվել է անկախ մասնագիտական գործառույթներ իրականացնող մարմին՝ հաշվեքնիշ պալատը, որը իր մասնագիտական գործառույթները իրականացնելիս գործադիր իշխանության մարմիններից անկախ է:

Պետական իշխանության մարմինների համակարգում անկախ սահմանադրական մարմինների ստեղծումը լայն առումով միտված է մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների իրացման առավել արդյունավետ երաշխիքների ստեղծմանը: Ժամանակակից սահմանադրական գարգացումները պահանջում են մարդու և քաղաքացու իրավունքների և ազատությունների երաշխավորման անմիջական և գործուն երաշխիքների ստեղծում: Անկախ սահմանադրական մարմինների և մարդու իրավունքների երաշխավորման միջն անմիջական կապի առկայությունը ընդգծվել է նաև որոշ միջազգային իրավական ակտերում: 1993թ.

Վիենային հայտարարությունում նշվում է, որ անկախ մարմինների գոյությունը պայմանավորված է մարդու իրավունքների և իրավունքի գերակայության երաշխավորմամբ, այդ նպատակով անհրաժեշտ է ուժեղացնել անկախ և ինքնավար մարմինների գործունեությունը, որոնք միտված են խրանելու և պաշտպանելու մարդու իրավունքները:

Անհրաժեշտ է նշել, որ ԱՍՍ-ները գործադիր իշխանության նկատմամբ իրականացնում են զապող և հավասարակշռող գործառույթներ: ԱՍՍ-ների կողմից գործադիր իշխանության նկատմամբ զապման և հավասարակշռման գործառույթը դրսերդում է որոշ ձևերով, օրինակ՝ ՄԻՊ-ը իրականացնում է պետական և ՏԻՄ-երի ու պաշտոնատար անձանց կողմից մարդու իրավունքների և ազատությունների պահպանումը, ՀՊ-ը՝ հաշվերձությունների և իրականացնում պետական բյուջեի և համայնքային բյուջեների միջոցների, ստացած փոխառությունների ու վարկերի, պետական և համայնքային սեփականության օգտագործման օրինականության և արդյունավետության նկատմամբ, ԿԸՀ-ը՝ վերահսկողությունների անցկացման օրինականության նկատմամբ: Ինչպես տեսնում ենք, ԱՍՍ-ների կողմից իրականացվող վերը նշված գործառույթները անմիջականորեն կապված են որոշակի ոլորտներում գործադիր իշխանության գործունեության վերահսկման, զապման և հավասարակշռման հետ:

Պետական իշխանության մարմինների համարագում ԱՍՍ-ներին վերապահված գործառույթների արդյունավետ իրականացման համար առանգքային խնդիր է պետական իշխանության օրենսդիր, գործադիր և դատական ճյուղերի հնարակոր ազդեցությունից ԱՍՍ-ների գործառության անկախության ապահովումը. Պետական իշխանության մարմինների համարագում ԱՍՍ-ների գործառության անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ է, որ սահմանադրությամբ և օրենքներով ամրագրվեն ԱՍՍ-ների գործունեության բավարար երաշխիքները, խոսքը իրավական և քաղաքական երաշխիքների մասին է: ԱՍՍ-ների անկախության ապահովման տեսանկյունից անհրաժեշտ է, որ ԱՍՍ-ների անդամները ունենան գործունեության բավարար իրավական երաշխիքներ: Սահմանադրական նորմերի վերլուծությունից բխում է, որ ԱՍՍ-ների անդամների գործունեության երաշխիքների մասով առկա են որոշակի խնդիրներ, մասնավորապես՝ սահմանադրական մակարդակով ամրագրված չեն ԱՍՍ-ների անդամների լիազորությունների դադարման և դադարեցման իհմքերը:

ԱՍՍ-ները ապաքաղաքական մարմիններ են, որի պայմաններում պետական իշխանության մարմինների հետ հարաբերություններում առանցքային խնդիրներից մեկը դառնում է այդ մարմինների քաղաքական չեզորության ապահովումը: ԱՍՍ-ների քաղաքական չեզորության ապահովումը անհրաժեշտ է դիտարկել երկու տեսանկյունից՝

ա) ԱՍՍ-ների անդամները չեն ունենալ գործունեությամբ և օրենքով արգելված այլ գործունեությամբ,

բ) ԱՍՍ-ները պետք է զերծ լինեն արտաքին քաղաքական ազդեցություններից:

2015թ. խմբ. Սահմանադրությամբ հստակ արգելվ է նախատեսվել ԱՍՍ-ների անդամների քաղաքական գործունեությամբ գրադպելու սահմանափակման առումով, մասնավորապես ԱՍՍ-ների անդամները իրենց լիազորությունների իրականացման ընթացքում չեն կարող լինել որևէ կուսակցության անդամ կամ որևէ այլ կերպ գրադպել քաղաքական գործունեությամբ (Սահմ. 191-200-րդ հոդվածներ): Այս առումով կարևոր նշանակություն ունի այս հանգամանքը, որ ԱՍՍ-ների անդամների կողմից իրականացվող վերը նշված գործառույթները անմիջականորեն կապված են որոշակի ոլորտներում գործադիր իշխանության գործունեության վերահսկման, զապման և հավասարակշռման հետ:

ԱՍՍ-ների անկախաւորյան և քաղաքական չեզորության ապահովման տեսանկյունից առավել կարևոր է այդ մարմիններին արտաքին քաղաքական ազդեցություններից զերծ պահելու հանգամանքը. ԱՍՍ-ները՝ պետական իշխանության մարմինների գործունեության նկատմամբ իրականացնում են որոշ վերահսկողական գործառույթներ, որի պարագայում պետական և ՏԻՄ-երի մարմինների և պաշտոնատար անձանց կողմից կարող են դրսերդություն լծակներ: ԱՍՍ-ների անկախության ապահովման նպատակով անհրաժեշտ են այնպիսի երաշխիքներ, որոնց պայմաններում ոչ մի պաշտոնատար անձ կամ պետական մարմին կամ քաղաքական ուժ ուղղակիորեն կամ անուղղակորեն չկարողանան ազդել ԱՍՍ-ների գործառույթների իրականացման վրա: Այդ առումով առանցքային նշանակություն ունի ԱՍՍ-ների ձևավորման մեխանիզմները: 2015թ. Սահմանադրությամբ նախատեսվել է, որ ԱՍՍ-ների անդամները ընտրվում են Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր թվի ծայների առնվազն

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

Երեք հինգորդով: ԱՍՍ-ների անդամների ընտրության համար ձայների այդպիսի համամասնության նախատեսումը ենթադրում է, ԱՍՍ-ների ձևավորման գործում քաղաքական ուժերի առավել լայն ներգրավվածություն, ինչը նվազեցնում է ԱՍՍ-ների վրա պառամենտական մեծամասնության աղդեցության հնարավորությունը:

Պետական իշխանության մարմինների համակարգում ԱՍՍ-ների կարգավիճակի հետ կապված հարցերից մեկը առնչվում է հաշվետվողականության ապահովման խնդրին: Չնայած այն հանգամանքին, որ ԱՍՍ-ները պետական իշխանության մարմիններից ունեն ինստիտուցիոնալ և գործառութային անկախություն, սակայն այդ անկախությունը չպետք է բացարձակ կերպով ընկալել: ԱՍՍ-ների անկախությունը ենթադրում է նաև հաշվետվողականությունը բավարար մեխանիզմների նախատեսում: Այս առումով անհրաժեշտ է նշել, որ 2015թ. խմբ. Սահմանադրությամբ նախատեսվել է հաշվետվողականության հետևյալ մեխանիզմը, այն է ԱՍՍ-ները իրենց գործունեության վերաբերյալ ամենամյա հաղորդում են ներկայացնում բարձրագույն ներկայացուցական մարմնին՝ Ազգային ժողովին:

ՀՀ-յան 2015թ. խմբ. Սահմանադրության համատեքսում առանցքային է համարվում նաև պետական իշխանության մարմինների համակարգում ՀՀ դատախազության ինստիտուցիոնալ տեղի հստակեցման խնդրից. Պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության ինստիտուցիոնալ տեղի վերաբերյալ միասնական մոտեցումներ չկան տեսական գրականությունում: Գ. Զերոտարելը դատախազությունը համարում է պետական իշխանության առանձին «հսկողական-իրավակիրառ» ճյուղ⁵, Վ. Տոչիլովսկին այն դիտարկում է դատական իշխանության համակարգում⁶, իսկ Կ. Ակվորցովը դատախազությունը համարում է իշխանության ճյուղերից անկախ գործող մարմին⁷: Կարծում ենք, որ անկախ այն հանգամանքից, թե՝ դատախազությունը պետական իշխանության մարմինների համակարգում ինչ կարգավիճակ կունենա, բոլոր դեպքերում էլ դատախազությունը կարող է արդյունավետ գործել, եթե ունենա գործունեության այնպիսի երաշխիքներ, որոնք արտաքին միջամտությունից կապահովեն դատախազության գործունեության անկախությունը, ապահովելով դատախազության գործունեության բափանցիկությունը և հրապարակայնությունը⁸:

Պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության ինստիտուցիոնալ տեղի հետ կապված միջազգային փորձի ուսումնասի-

րությունից բխում է, որ նշված հարցի վերաբերյալ միասնական մոտեցումներ չկան: Մի շարք պետությունների սահմանադրական ամրագրումների ուսումնասիրությունից ակնհայտ է դառնում, որ դատախազության կարգավիճակը կամ հստակեցված չէ, կամ ամբողջական հստակեցված չէ: Այսպես՝ Ռուսիայում դատախազությանը վերաբերող հոդվածը ամրագրված է դատական իշխանության գլխում և ունի հետևյալ բովանդակությունը՝ դատախազությունը իր գործունեությունը իրականացնում է օրինականության, անաշառության սկզբունքների հիման վրա և գտնվում է արդարադատության նախարարության հսկողության տակ (սահմ. 132-րդ հոդված): Ալրանիայում դատախազությունը գործում է դատական իշխանության համակարգում, և սահմանադրության 148-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը կազմակերպվում և գործում է որպես կենտրոնական մարմին՝ կցված դատական համակարգին: Իր գործառույթները իրականացնելիս՝ դատախազությունը ենթարկվում է սահմանադրությանը և օրենքներին: Խոպիայում դատախազության վերաբերյալ հոդվածը գտնվում է դատական իշխանության գլխում, և ունի հետևյալ բովանդակությունը՝ դատախազությունը իրականացնում է քրեական հետազոտությունը (սահմ. 112-րդ հոդված):

Միաժամանակ, որոշ պետությունների սահմանադրություններ դատախազությունը ընտրազրում են, որպես անկախ կամ ինքնավար մարմին: Մակեղոնիայի սահմանադրության 106-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը բացառիկ և ինքնավար պետական մարմին է, որը իրականացնում է սահմանադրության և օրենքով իրեն վերապահված լիազորությունները: Խորվարիայի սահմանադրության 125-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը ինքնավար և անկախ դատական մարմին է, որը իրականացնում է իրեն վերապահված լիազորությունները: Պորտոգալիայի սահմանադրության 219-րդ հոդվածի համաձայն՝ դատախազությունը ինքնավար մարմին է:

2015թ. խմբ. Սահմանադրությամբ դատախազության վերաբերյալ ամրագրված նորմերի վերլուծությունից բխում է, որ պետական իշխանության մարմինների համակարգում դատախազության իրավական կարգավիճակը ամբողջությամբ հստակեցված չէ: Սահմանադրությամբ դատախազությունը պետական իշխանության որևէ ճյուղի հիմնադիրությունավոր համակարգում չի նախատեսվել: Դատախազության կարգավիճակի վերաբերյալ դրույթ ամրագրված է Սահմանադրության 176-րդ հոդվածի 1-ին մասում, համաձայն որի՝ «1. Դատախազությունը միասնական համակարգ է, որը դե-

Կավարում է Գյիսավոր դատախազքը: Ինչպես տեսնում ենք, Սահմանադրությամբ դատախազության կարգավիճակի վերաբերյալ օգտագործվել է միայն միասնական համակարգ եզրույթը և չի նշվում դատախազության անկախության կամ ինքնավարության մասին: Անհրաժեշտ է նշել, որ տեսական գրականությունում որոշ հեղինակների կողմից կարևորվում է դատախազությանը անկախ լինելու հատկանիշը: Լ. Սավյուկի կարծիքով, դատախազության արդյունավետ գործունեության համար կարևոր հատկանիշ է համարում անկախությունը, որը անհրաժեշտ է դատախազության գործառությների և լիազորությունների իրականացման համար: Նշված հարցին՝ Ռուսաստանի «Դատախազության մասին» օրենքի նախագծի վերաբերյալ տրված եզրակացությունում անդրադարձել է նաև Վենետիկի հանձնաժողովը նշելով, որ պետական իշխանության ճյուղերի համակարգում դատախազության անկախությունը չի խախտում իշխանությունների բաժանման և հավասարակշռման սկզբունքը, քանի որ դատախազությունը համարվելով անկախ սահմանադրական մարմին՝ գործում է սահմանադրությամբ իրեն վերապահված լիազորությունների շրջանակներում¹⁰: Մեկ այլ գեկույցում Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ սահմանադրությունը և օրենքները մի կողմից պետք է երաշխավորեն դատախազության անկախությունը, իսկ մյուս կողմից՝ պետք է հսկողական մեխանիզմներ նախատեսն, որպեսզի դատախազությունը պատասխանատու կերպով իրականացնի իր գործառությները¹¹: Մ. Շալտուղը և Կ. Ամիրբեկովը դատախազության արդյունավետ գործունեության համար կարևորում են զարգումների և հավասարակշռման գործուն մեխանիզմների առկայությունը¹²:

2015թ. խմբ. Սահմանադրության նորմերի վերլուծությունից բխում է, որ դատախազությունը պետական իշխանության մարմինների համակարգում ունի այնպիսի կարգավիճակ, որը բնորոշ է անկախ սահմանադրական մարմիններին, ինչը պայմանափորված է գլխավոր դատախազի նշանակման, պաշտոնակության և դատախազության գործունեության հաշվետվողական մեխանիզմների հետ: Այսպես՝ 2015թ. խմբ. Սահմանադրության 177-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ գլխավոր դատախազն ընտրվում է Ազգային ժողովի կողմից՝ պատգամավորների ընդհանուր քվի ձայների առնվազն երեք իինգերորդով: Ազգային ժողովը, ոչ միայն ընտրում է գլխավոր դատախազին, այլև Սահմանադրության 177-րդ հոդվածի 3-րդ մասի համա-

ձայն՝ օրենքով սահմանված դեպքերում պատգամավորների ընդհանուր քվի ձայների առնվազն երեք իինգերորդով կարող է պաշտոնանկ անել գլխավոր դատախազին¹³: Բացի այդ դատախազությունը իր գործունեության վերաբերյալ հաղորդում է Անդրկայացնում Ազգային ժողովին: Սակայն 2015թ. խմբ. Սահմանադրությամբ գլխավոր դատախազի կողմից Ազգային ժողովին հաղորդում ներկայացնելու վերաբերյալ սահմանադրական պահանջ չի ամրագուել: Նմանատիպ պահանջ ամրագրվեց «Ազգային ժողովի կանոնակարգ» օրենքով, որի 128-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազը յուրաքանչյուր տարի՝ մինչև ապրիլ 1-ը, Ազգային ժողով է ներկայացնում հաղորդում դատախազության նախորդ տարվա գործունեության մասին:

Ամփոփելով նշենք, որ սահմանադրական գարգացումների արդյունքում ՀՀ-ում պետական իշխանության օրենսդիրը, գործադիր և դատական ճյուղերի կողքին ստեղծվել են անկախ մասնագիտական գործառույթներ իրականացնող մարմիններ՝ ԱՍՍ-ները, որոնք պետական իշխանության ճյուղերից ունեն ինստիտուցիոնալ և գործառութային անկախություն, գործունեությունը կրում է ապարադական բնույթ, ձևավորվում են Ազգային ժողովի կողմից և իրենց գործունեության վերաբերյալ հաղորդում ներկայացնում Ազգային ժողովին: Միաժամանակ ԱՍՍ-երի ինստիտուցիոնալ և գործառութային անկախությունը դեռևս բավարար չէ այդ մարմինների արդյունավետ գործունեության իրականացման համար: ԱՍՍ-երի գործունեության արդյունավետ իրականացման համար անհրաժեշտ են բավարար իրավական և քաղաքական երաշխիքների առկայություն:

ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅՈՒՆ

¹ Տե՛ս, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի ՍԴ-673 որոշում, ընդունվել է 16.01.2007թ., սկզբնաղբյուր ՀՀ ՊՍ 2007.01.31/7(531) Հոդ.143 հասանելի էր՝
<http://www.arlis.am/documentview.aspx?docID=30572>

² ԱՍՍ-ների վերաբերյալ միջազգային փորձի ուսումնախրությունից բխում է, որ մի շաբթ պետություններում նույնական գործում են ԱՍՍ-ներ, մասնավորապես՝ Հեհաստանի սահմանադրության 9-րդ գլուխը կոչվում է պետական հսկողության և իրավունքների պաշտպանության մարմինները կազմված է բարձրագույն հսկողության պալատից, մարդու իրավունքների պաշտպանի գրասենյակից, ռատիոնի և հեռուստատեսության հանձնաժողովից: Կողմանը պահպանության 113-րդ հոդվածի համաձայն՝ պետական իշխանությունն իրականացվում է օրենսդիր, գործադրության մարմինների կողմից: Այս մարմիններից բացի կան այլ ինքնակար և անկախ մարմիններ, որոնք իրականացնում են պետական իշխանության այլ գործառույթներ: Հարավային Աֆրիկայի սահմանադրության 9-րդ բաժինը նախատեսում է վեց անկախ մարմիններ՝ դատախազություն, մարդու իրավունքների կոմիտե, մշակութային իրավունքների զարգացման և պաշտպանության կոմիտե, կրօնական և լեզվաբանական միավորում, գեներալային հավասարության կոմիտե, զիսավոր ասդիտոր և ընտրական հանձնաժողով: Խոհեմայի սահմանադրության 6-րդ գլուխի համաձայն՝ գործում են հետևյալ անկախ սահմանադրական մարմինները՝ ընտրական հանձնաժողով, հեռուստատեսության և ռատիոնի հանձնաժողով, մարդու իրավունքների կոմիտե, լավ կառավարման և հակակոռուպցիոն հանձնաժողով: Պերուի սահմանադրության 161-րդ հոդվածը, որպես անկախ մարմին նախատեսում է մարդու իրավունքների պաշտպանի ինստիտուտը, իսկ Ինդրենեզիայի սահմանադրության 23-րդ հոդվածը՝ զիսավոր ասդիտորական խորհուրդը: Խոհեմայի թակավորության սահմանադրության 11-րդ գլուխը նախատեսում է հետևյալ անկախ սահմանադրական մարմինները՝ ընտրական հանձնաժողով, օմբուդսմանի ինստիտուտը, ազգային հակակոռուպցիոն հանձնաժողով, պետական ասդիտորական հանձնաժողով: Նեպայի սահմանադրությունը նախատեսվում է հետևյալ անկախ մարմինները՝ իշխանության չարաշահման քննության հանձնաժողով, ընդհանուր ասդիտորի գրասենյակ, հանրային ծառայությունների հանձնաժողով, ընտրական հանձնաժողով, մարդու իրավունքների հանձնաժողով, ազգային բնական ռեսուրսների և ֆինանսների հանձնաժողով:

³ Առավել մանրանան տե՛ս, UN Human Rights Committee, General Comment on Art.25 (1996), point 20., հասանելի էր՝ <http://www.equalrightstrust.org/ertdocumentbank/general%20comment%2025.pdf>

⁴ Տե՛ս, Vienna Declaration, adopted by on 25 June 1993 by the World Conference on Human Rights in Vienna, Austria (A/CONF.157/NI/6), հասանելի էր՝ <http://www.ohchr.org/EN/ProfessionalInterest/Pages/Vienna.aspx>

⁵ Տե՛ս, Չեబոգարев Գ. Ի. «Принцип разделения властей в конституционной системе Российской Федерации», Екатеринбург, 1998 թ., с. 16.

⁶ Տե՛ս, Точиловский В. Н. «О концепции прокурорской власти проблемы и перспективы» Советское государство и право. 1990г., ст. 46., Այս առումով Վենետիկի հանձնաժողովը նշում է, որ հստակ պետք է սահմանադրական դատախազական և դատական գործառույթները: Տե՛ս, European commission for democracy through law, (2008)019, «Opinion on the draft law on the Public Prosecutors' service of Moldova» § 6, հասանելի էր՝ <https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016806552ab>

⁷ Տե՛ս, Скворцов К. Ф. «Становление правового государства в РФ и функции прокуратуры», «Государство и право», 1994 թ., N 5. с.7.

⁸ Այս մասին տե՛ս, նաև Վենետիկի հանձնաժողովի կողմից Ուկրանիայի և Մոնտենեգրոյի «Դատախազության մասին» օրենքի նախագծերի վերաբերյալ տրված եղանակությունում, տե՛ս European commission for democracy through law, «Opinion on the Draft Law amending the Law of Ukraine on the Office of the Public Prosecutor», CDL-AD(2004)038, § 26 հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2004\)038-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2004)038-e), տես նաև European commission for democracy through law, «Opinion on the Draft Law on the State Prosecution Office of Montenegro», CDL-AD(2014)042, § 16 հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI\(2015\)009-e](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL-PI(2015)009-e)

⁹ Տե՛ս, Савюк Л.К. «Правоохранительные органы», учебник, Москва, «Юристъ», 2006 թ., ст. 530.

¹⁰ Տե՛ս, European commission for democracy through law, «Opinion on the Federal Law on the Prokuratura (Prosecutor's Office) of the Russian Federation», CDL-AD(2005)014, §13, հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD\(2005\)014-e](http://www.venice.coe.int/webforms/documents/default.aspx?pdffile=CDL-AD(2005)014-e)

¹¹ Տե՛ս, European commission for democracy through law, «Opinion on the Regulatory concept of the Constitution of the Hungarian Republic», CDL(1995)073rev, chapter 11, p.7 հասանելի էր՝ [http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL\(1995\)073rev-c](http://www.venice.coe.int/webforms/documents/?pdf=CDL(1995)073rev-c)

¹² Տե՛ս, Шалумов М. С. «Прокуратура в государственном механизме России, проблемы совершенствования прокурорского надзора», Москва, НПК генпрокуратуры РФ., 1997 թ., ст. 228-236., տե՛ս նաև Амирбеков К.И. , «Государственная власть и местное самоуправление», 2014 թ., N 2, ст. 37.

¹³ Սակայն Սահմանադրությամբ ամրագրված չեն զիսավոր դատախազի լիազորությունների դադարեցման իիմքերը: Այս առումով հարկ է նշել, որ Վենետիկի հանձնաժողովը Հոնգարիայի սահմանադրության նախագծի վերաբերյալ տրված եղանակությունում, նշում է, որ դատախազության անկախության ապահովման համար անհրաժեշտ է, որ սահմանադրությամբ առնվազն կարգավիրվեն հետևյալ հարցերը՝ դատախազության գործառույթների շրջանակը, զիսավոր դատախազի նշանակման կարգը և ազատման իմքերը և կարգը: Որոշ պետությունների սահմանադրություններում ամրագրված է զիսավոր դատախազի լիազորությունների դադարեցման իիմքերը:

Մասնավորապես՝ *Այրանիայի* սահմանադրության 149-րդ հոդվածի համաձայն՝ գլխավոր դատախազը կարող է Հանրապետության նախագահի առաջարկությամբ՝ խորհրդարանի համաձայնությամբ պաշտոնանկ անել գլխավոր դատախազին, եթե գլխավոր դատախազը կուպիտ կերպով խախտել է սահմանադրությունը, գլխավոր դատախազի գործունեության համար առաջացել են ֆիզիկական կամ հոգեկան անկարողություն, կատարել է այնպիսի արարք, որը հարիր չէ դատախազական էթիկային և կարգապահությանը: Տե՛ս, European commission for democracy through law, «Opinion on the Regulatory concept of the Constitution of the Hungarian Republic», նշված գեկույց, p.6.

Այկ Կեսօյն

Ведущий специалист юридического управления
аппарата Президента Республики Армения,
аспирант академии государственного
управления Республики Армения

РЕЗЮМЕ

Основные проблемы институционального места и функциональной роли независимых конституционных органов в системе разделения и баланса властей

Основные черты, характеризующие статус независимых конституционных органов, которые действуют в системе органов государственной власти, а также механизмы сдержек и противовесов, с помощью которых независимые конституционные органы взаимосвязаны с органами государственной власти, были предметом исследования в рамках этой статьи.

Исследование выявило, что в результате конституционных изменений рядом с законодательной, исполнительной и судебной ветвями государственной власти РА были созданы Н О, которые имеют институциональную и функциональную независимость от ветвей государственной власти. Они считаются аполитичными органами, которые формируются Национальным собранием и отвечают перед Национальным собранием. В то же время, были подняты и представлены основные проблемы, которые препятствуют независимым конституционным органам эффективно выполнять свои функции, возложенных на них Конституцией и законами.

Ключевые слова: принцип разделения и баланса властей, независимые конституционные органы, прокуратура, функциональная независимость, институциональная независимость, подотчетность.

Hayk Kesoyan

Staff of the President of Armenia, legal department, leading specialist
PhD student of public administration academy of the Republic of Armenia

SUMMARY

Main problems of the institutional place and functional role of independent constitutional bodies in the system of division and balance of authorities

The main features characterizing the status of independent constitutional bodies, who acts in the system of state's power bodies, as well as the mechanisms of checks and balances, with the help of which independent constitutional bodies are interconnected with public authorities, have been a subject of the study within the framework of the article.

The study revealed that as a result of constitutional changes, next to the legislative, executive and judicial branches of state authorities of RA ICB have been created, which has institutional and functional independence from the branches of state authorities. They are considered non-political bodies, which are formed by the National Assembly and are accountable to the National Assembly. At the same time, the main problems have been raised and presented, which inhibit independent constitutional bodies to discharge effectively their functions entrusted to them by the Constitution and laws.

Keywords: the principle of division and balance of authorities, independent constitutional bodies, procuracy, functional independence, institutional independence, accountability.